

Երվանդ Հ. Գրեկյան
Պատմ. գիտ. դոկտոր

ԿԱՌԼ ՖՐԻԳՐԻԽ ԼԵՄԱՆ-ՀԱՌՈՒԿՏԸ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՔԱՅԱՅԱՆԿԸ

«Երեք Ռուսաներ»-ի խնդրի շուրջ*

Բանալի բառեր – Կ. Ֆ. Լեման-Հաուպտ, Բիայնիլի-Ուրարտու, Ժամանակագրություն, արքայացանկ, Ռուսա Սար-դուրորդի, Ռուսա Էրիմենայորդի, Ռուսա Արգիշթորդի, Թոփ-րաքքալե, Քեշիշ-Գյուլ, Գյուվելեք (Էրմանց):

Ուրարտագիտության ռահվիրաներից Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտը (նկ. 1) հայագիտական շրջանակներին առավելապես հայտնի է «Հայաստանը հնում և ներկայում» ստվարածավալ աշխատությամբ¹, իսկ նրա թողած ուրարտագիտական ժառանգությունը հիմնականում մնացել է անտեսված:

Մինչդեռ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի ճանապարհորդությունները Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում, Վալդեմար Բելքի հետ միասին²

* Սույն նյութը ներկայացվել է Վանի հերոսամարտի 100 և Վան քաղաքի առաջին հիշատակության 2870-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին: Օգտվելով առիթից՝ ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել պ. գ. դ. Հարություն Մարությանին՝ գիտաժողովի կազմակերպման և մեզ ցուցաբերած աջակցության համար: Ընդունվել է տպագրության 17. 04. 2017:

1 Տե՛ս **Lehmann-Haupt C.F.**, Armenien einst und jetzt, I: Vom Kaukasus zum Tigris und nach Tigranokerta. Berlin, 1910; **նույնի՛** 1926, Armenien einst und jetzt II/1: Das Türkische Ost-Armenien – In Nord-Assyrien. Berlin – Leipzig, 1926; **նույնի՛** Armenien einst und jetzt II/2: Kultur, Herkunft und Verbleib der Chaldeer – Der Rückzug der zehntausend Griechen von der Ebene Alaschgert zum Schwarzen Meer. Berlin, 1931.

2 Տե՛ս **Belck W.**, Lehmann(-Haupt) C.F., Vorläufiger Bericht über die im Jahre 1898 erzielten Ergebnisse einer Forschungsreise durch Armenien, „Nachrichten von der Königl. Gesellschaft der Wissenschaften zu Göttingen. Philologisch-historische Klasse“, Jahrgang 1899. Heft 1, էջ 80–86; **նույնի՛** Zweiter Vorbericht über eine Forschungsreise in Armenien, „Sitzungsberichte der Königlich Preussischen Akademie der Wissenschaften zu Berlin“, Jahrgang 1899, XXXVIII., էջ 745–749; **նույնի՛** Bericht über die armenische Forschungsreise der HHrn. **W. Belck** und **C.F. Lehmann**, Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte 13. Januar 1900, „Zeitschrift für Ethnologie“ 32, էջ 29–66; **Lehmann(-Haupt) C.F.**, Bericht über den von ihm erledigten Abschnitt der armenischen Expedition. Reise von Rowanduz bis Alaschgert. April bis August 1899, Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte, „Zeitschrift für Ethnologie“ 31, էջ 586–614; **նույնի՛** Bericht über die Ergebnisse der von Dr. W. Belck und Dr. C.F. Lehmann 1898/99 ausgeführten Forschungsreise in Armenien, „Sitzungsberichte der Königlich Preussischen Akademie der Wissenschaften zu Berlin“, Jahrgang 1900, XXIX, էջ 619–633; **նույնի՛** Von der deutschen armenischen Expedition, „Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes“ 14, էջ 1–45, ևս:



Նկ. 1: Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտ (11.03.1861 – 24.07.1938):

1898–1899-ին նրա կատարած պեղումները Վանում՝ Թոփրաքքալեում, և պեղված նյութի մասնակի հրատարակությունը³ մեծապես նպաստեցին, որպեսզի գիտական աշխարհը վերստին կենտրոնանա Վանի և «Խալդիայի» (ինչպես այն ժամանակ անվանում էին Ուրարտուն⁴) ուսումնասիրության վրա: 1911–1912-ին Հովսեփ Օրբելու և 1916-ին Հովսեփ Օրբելու և Նիկողայոս Մառի ուղևորությունները Վան և «Գանձադռան» պեղումների ժամանակ «Սարդուրյան տարեգրության» հայտնաբերումը⁵ գոնե մասամբ պայմանավորված էին Կ. Ֆ. Լեման-Հաուպտի գործունեությամբ, մի մարդու, որի գիտական վաստակը, ինչպես նաև դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ՝ 1915-ին⁶, երբ նա Կ. Պոլսի համալսարանում զբաղեցնում էր պրոֆեսորի պաշտոնը⁷, մինչ օրս պատշաճ գնահատանքի չի արժանացել հայ պատմագիտության կողմից:

Կ. Ֆ. Լեման-Հաուպտն առաջինն էր, որ փորձեց կազմել և գիտական հիմքերի վրա ներկայացնել ուրարտական արքաների ժամանակագրությունը: Իր ուսումնասիրությունը նա հրատարակեց դեռևս 1894-ին “Zeitschrift für Assyriologie” հանդեսի էջերում: Այստեղ նա առաջարկում էր ժամանակագրական երկու սանդղակ, բայց ի վերջո նախապատվությունը տալիս էր առաջին սանդղակին⁸: Այդ սանդղակում մասնավորապես՝ Ռուսա Էրիմենայորդուն նա դիտում էր իբրև Ռուսա I:

Ինչպես Կ. Ֆ. Լեման-Հաուպտը, այդ դարաշրջանի խոշոր աստուրագետներից Ֆրանսուա Թյուրո-Դանժենը, որ հրատարակել էր ասորեստանյան արքա Սարգոն II-ի՝ Ք.ա. 714-ին դեպի Ուրարտու ձեռնարկած արշավանքը նկարագրող այսպես կոչված «Լուվրի ադյուսակ»-ը, նույնպես կարծում էր, որ Ուրարտուի արքա Ուրսան՝ Սարգոն II-ի ախոյանը, Ռուսա

3 Տե՛ս **Lehmann-Haupt C. F.**, Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Abhandlungen der königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, philologisch-historische Klasse, Neue Folge 9/3. Berlin, 1907.

4 Տե՛ս **Lehmann(-Haupt) C. F.**, Chaldishce Forschungen: I. Der Name ‘Chalder’, Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte, „Zeitschrift für Ethnologie“ 27, 1895, էջ 578–592.

5 Արձանագրության հայտնաբերման մանրամասնությունները տե՛ս **Март Н.Я., Орбели И.А.**, Археологическая экспедиция 1916 года в Вань. Раскопки двухъ нишь на Ванской Скаль и надписи Сардура Второго изъ раскопокъ западной ниши. Петербургъ, 1922, էջ 8 և հաջորդիվ; **Salvini M.**, Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995, էջ 63 և հաջորդիվ:

6 Տե՛ս **Kieser H.-L.** 2015, Armeniermord, Shoah und das Ehepaar Lehmann-Haupt. Eine Kontextualisierung, in: **Fink S., Eisterer K., Rollinger R., Rupnow D.** (Hrsg.), Carl Friedrich Lehmann-Haupt. Ein Forscherleben zwischen Orient und Okzident. Wiesbaden, 2015, էջ 95 և հաջորդիվ:

7 Կ. Ֆ. Լեման-Հաուպտի կենսագրության համար տե՛ս **Kellner A.**, Carl Friedrich Lehmann-Haupt. Das Leben eines fast vergessenen Althistorikers und Altorientalisten, „Klio“ 97/1, 2015, էջ 245–292; **սույնի՝** Carl Friedrich Lehmann-Haupt. Ein biographischer Abriss, in: **Fink S., Eisterer K., Rollinger R., Rupnow D.** (Hrsg.), Carl Friedrich Lehmann-Haupt. Ein Forscherleben zwischen Orient und Okzident. Wiesbaden, 2015, էջ 95–107:

8 Տե՛ս **Belck W.**, Lehmann(-Haupt) C.F., Ein neuer Herrscher von Chaldia, „Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie“ 9, 1894, էջ 339–360.

Էրիմենայորդին էր: Վերջինիս նա համարում էր նաև նոր հարստության հիմնադիրը⁹:

Տարիներ անց Կ. Ֆ. Լեման-Հաուպտը, որին արդեն հայտնի էր Ռուսա Սարդուրորդի անունով արքայի գոյության փաստը, նրան է համարում Ուրարտուի արքան՝ Սարգոն II-ի 714-ի արշավանքի ժամանակ: Մինևույն ժամանակ, նա կարծում էր, որ այնուամենայնիվ հարկ է տարբերակել Ռուսայի հայր Սարդուրիին Սարդուրի Արգիշթորդուց՝ գտնելով, որ Ուրարտուում իշխանության էր եկել Իշպուինիի ավագ որդի Սարդուրիից սերող ճյուղի ներկայացուցիչը, որը նույնպես կրել է Սարդուրի անունը: Ռուսա Էրիմենայորդուն, ի տարբերություն իր նախկին տեսակետի, նա այժմ տեսնում էր ուրարտական արքայացանկի վերջում և նրան անվանում Ռուսա III¹⁰:

Արքաների հաջորդականությունից բացի՝ Լեման-Հաուպտի մյուս տեսակետները մերժվեցին հետագա գրեթե բոլոր հետազոտողների կողմից: Մյուս կողմից՝ Քեշիշ-գյուլի արձանագրությունը, որտեղ հիշատակվում է Ռուսայի անունը առանց հայրանվան, և որը Կ. Ֆ. Լեման-Հաուպտը սխալմամբ վերագրում էր Ռուսա Սարդուրորդուն, սկսեցին կապել Ռուսախինիի Կիլբանիկայի քաղաքի (Թոփրաքքալե) հիմնադրման հետ՝ քաղաքի կառուցումը պայմանավորելով Թիգլաթպալասար III-ի կողմից Տուշպայի ավերումով¹¹: Դրանով Ռուսա Սարդուրորդին դառնում էր նաև «Ռուսա» անունը կրող առաջին արքան¹²:

Այս մոտեցումը՝ որոշ վերապահումներով հանդերձ, երկար ժամանակ իշխում էր ուրարտագիտական գրականության մեջ: Ռուսաների հաջորդականության հարց ըստ էության չէր քննարկվում, իսկ ժամանակ առ ժամանակ առաջ եկած կասկածները վերաբերում էին միայն Թոփրաքքալեի հիմնադրման ժամանակաշրջանին¹³: Անցյալ դարի վերջերից սկսած մասնագիտական գրականության մեջ արդեն գերիշխում էր Քեշիշ-գյուլի


9 Sln **Thureau-Dangin F.**, Une relation de la huitième campagne de Sargon (714 av. J.-C.), Textes cunéiformes, Tome III, Musée du Louvre. Paris 1912, էջ xviii-xix, xix և ծխք. 3.

10 Sln **Lehmann(-Haupt) C.F.**, Bericht über die Ergebnisse der von Dr. W. Belck und Dr. C.F. Lehmann 1898/99 ausgeführten Forschungsreise in Armenien, էջ 625; **նույնի**՝ Das urartäisch-chaldische Herrscherhaus, „Zeitschrift für Assyriologie und Vorderasiatischer Archäologie“ 33, 1921, էջ 28, 34 հաջորդիվ; **նույնի**՝ Armenien einst und jetzt II/1: Das Türkische Ost-Armenian – In Nord-Assyrien, էջ 25; **Լեման-Հաուպտ Կ. Փ.**, Вступительная лекция по истории и культуре халдов, “Труды Тбилисского Гос. Университета” VI, Тбилиси, 1938, էջ 254, 263.

11 Sln **Belck W., Lehmann(-Haupt) C. F.**, Über neuerlich aufgefundenene Keilinschriften in russisch und türkisch Armenien, „Zeitschrift für Ethnologie“ 24, 1892, էջ 141 հաջորդիվ; **Lehmann-Haupt C.F.**, Das urartäisch-chaldische Herrscherhaus, էջ 36 հաջորդիվ, 50; **նույնի**՝ Armenien einst und jetzt II/1: Das Türkische Ost-Armenian – In Nord-Assyrien, էջ III; **նույնի**՝ Вступительная лекция по истории и культуре халдов, էջ 255 հաջորդիվ:

12 Sln նաև **Пигоревский Б. Б.**, История и культура Урарту. Ереван, 1944, էջ 36 հաջորդիվ; **նույնի**՝ Ванское царство (Урарту). Москва, 1959, էջ 87 հաջորդիվ; **Меликишвили Г. А.**, Древневосточные материалы по истории народов Закавказья I. Наири-Урарту. Тбилиси, 1954, էջ 331, 351; **Barnett R. D.**, The Excavations of the British Museum at Toprak Kale Near Van, “Iraq” 12/1, 1950, էջ 32-33; **Արտույան Ի. Ե.**, Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики. Ереван, 1970, էջ 280; նույն:

13 Քննարկումների համար տես և հմմտ. **Götze A.**, Kulturgeschichte des Alten Orients. Kleinasien. München, 1957, էջ 198, ծխք. 2; **van Loon M. N.**, Urartian Art. Its Distinctive Traits in the Light of New Excavations. Istanbul – Leiden, 1966, էջ 19-20; **Burney Ch. A., Lang D. M.** The Peoples of the Hills. Ancient Ararat and the Caucasus. London, 1971, էջ 162-163; **Salvini M.**, Eine neue urartäische Inschrift aus Mahmud Abad (West Azerbaidjan), “Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge” 10, 1977, էջ 127; նույն:



Նկ. 2: Քեշիշ-գյոլ + Գյովլեթ կոթողի վերակազմությունը և գրչանկարը (Salvini M., Argiști, Rusa, Erimena, Rusa und die Löwenschwänze: Eine urartäische Palastgeschichte des VII. Jh. v.Chr., էջ 148, նկ. 2; նույնի՝ Corpus die testi urartei, vol. III, Tavole, “Documenta Asiana” VIII/3. Roma, 379):

կոթողի, հետևաբար նաև՝ Թոփրաքքալեի կառուցման վերաթվագրումը Ռուսա Արգիշթոթղու կառավարման շրջանով¹⁴: Մակվի մոտ՝ Բաստամից հայտնաբերված տեքստերից մեկի վկայությունը՝ Ռուսա Արգիշթոթղու կողմից գահը Ռուսախինիլի Կիլբանիկայի տեղափոխելու մասին, թվում է, հաստատում էր նման տեսակետը¹⁵: Այդ տեսակետի արմատավորմանը մեծապես նպաստեցին նաև նորահայտ Ռուսախինիլի էիդուրուկայի քաղաքի պեղումները (Այանց/Այանիս): Քաղաքի հիմնադիրը Ռուսա Արգիշթոթղին էր, նա էր հիմնել նաև երեք այլ խոշոր կենտրոններ՝ «Թեյշերայի քաղաք»-ը (Կարմիր Բլուր), «Ռուսայի փոքր քաղաք»-ը (Բաստամ) և «Զիուկունի երկրի

14 Տե՛ս Zimansky P.E., Ecology and Empire: The Structure of the Urartian State, SAOC 41. Chicago, 1985, էջ 79–80; Salvini M., Die urartäischen Schriftdenkmäler aus Bastam (1977–1978), in: Kleiss W. (Hrsg.), Bastam II. Ausgrabungen in den urartäischen Anlagen 1977–1978, „Teheraner Forschungen“ V. Berlin, 1988, էջ 130–131; նույնի՝ Geschichte und Kultur der Urartäer, էջ 103 և հաջորդիվ, 108; Çilingiroğlu A., Salvini M., The Historical Background of Ayanis, in: Çilingiroğlu A., Salvini M. (eds.), Ayanis I. Ten Year’s Excavations at Rusaşinili Eiduru-kai 1989–1998, “Documenta Asiana” VI. Roma, 2001, էջ 16 և հաջորդիվ.

15 Տե՛ս Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, N 412₁₋₃ (այսուհետև՝ КУКН); Salvini M., Corpus die testi urartei, vol. IV. Iscrizioni su bronzi, argilla e altri supporti nuove iscrizioni su pietra paleografia generale, “Documenta Asiana” VIII/IV, Roma, 2012, CB Ba–6₁₋₃ (այսուհետև՝ CTU IV).

Խաղիի քաղաք»-ը (Արծկե/Քեֆքալեսի): Հետևաբար, նաև Ռուսախինիլի Կիլբանիկայիի հիմնադրման հնարավորությունը Ռուսա Արգիշթորդու կողմից միանգամայն տրամաբանական էր թվում:

2002-ին Վանից ոչ հեռու հին հայկ. Էրմանց (Էրմանիս, այժմ՝ Գյովելեք) գյուղի մոտ հայտնաբերված պակասավոր կոթողի հրատարակությունը¹⁶ նոր էջ բացեց այս քննարկումներում, երբ շուտով պարզ դարձավ, որ այն վաղուց հայտնի Քեշիշ-գյուղի կոթողի կորսված վերին հատվածն է (նկ. 2)¹⁷: 2006 թ-ին հայտնաբերվեց նաև այդ արձանագրության կրկնօրինակը հանդիսացող Հեֆշետրիկի (այժմ՝ Սավաջքք) ամբողջական կոթողը¹⁸, և այլևս կասկած չկար, որ զույգ կոթողները թողել է Ռուսա Էրիմենայորդին¹⁹:

Այս բացահայտումը ստիպում է վերանայելու Ք.ա. 8-7-րդ դդ. ուրարտական արքաների ժամանակագրությունը: Եթե Ռուսախինիլի Կիլբանիկայի քաղաքի հիմնադիրը Ռուսա Էրիմենայորդին էր, իսկ քաղաքը հիշատակվում է Ռուսա Արգիշթորդու արձանագրություններում²⁰, ապա ակնհայտ է դառնում, որ Ռուսա Էրիմենայորդու կամ այսպես կոչված Ռուսա III-ի գահակալության շրջանը պետք է վերաթվագրել Ռուսա Արգիշթորդուց կամ Ռուսա II-ից ավելի վաղ ընկած շրջանով: Ավելին, Ռուսա Էրիմենայորդու իշխանության շրջանը կարող էր նախորդել անգամ Ռուսա Սարդուրդուն կամ «Ռուսա I»-ին՝ ի դեմս Ռուսա Էրիմենայորդու տեսնելով նաև ասորեստանյան արքա Սարգոն II-ի արձանագրություններում հիշատակված և նրա «8-րդ տարվա արշավանք»-ից հետո ինքնասպանությամբ իր կյանքին վերջ տված Ուրարտուի արքա Ուրսային: Ըստ այդմ՝ Ռուսա Էրիմենայորդին կարող է դառնալ «Ռուսա» անունը կրող առաջին արքան²¹: Այստեղ նշենք նաև, որ Թոփրաքքալեից գտնված և Ռուսա Էրիմենայորդու կողմից արձանագրված վահանների պատկերագրությունը մոտ է Ք.ա. 8-րդ դ. արքաների՝ Արգիշթի Մենուայորդու և Սարդուրի Արգիշթորդու շրջանի պատկերագրությանը²² և տարբերվում է Ք.ա. 7-րդ դ. օրինակներից:

16 Stü **Salvini M.**, Una stele di Rusa III Erimenahi dalla zona di Van, "Studi Micenei ed Egeo-Anatolici" 44/1, 2002, էջ 115 հաջորդիվ; **Նույնի՝** Corpus die testi urartei, vol. I. Le iscrizioni su pietra e roccia: I Testi, "Documenta Asiana" VIII/1. Roma, A 14-1 (այսուհետև՝ CTU I); **Գրեկյան Ե.Ը.**, Գյովելեքի ուրարտական արձանագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», N 1 (165), 2004, էջ 224-252:

17 Stü **Salvini M.**, Le due stele di Rusa Erimenahi dal Keşiş Göl, "Studi Micenei ed Egeo-Anatolici" 48, 2006, էջ 209, 230, նկ. 10, էջ 250, նկ. 32; **Նույնի՝** Das Corpus der urartäischen Inschriften, in: **Kroll S., Gruber C., Hellwag U., Roaf M., Zimansky P.** (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, AI 51, Louvain, 2012, էջ 127 հաջորդիվ, նկ. 08.25.

18 Stü **Salvini M.**, Le due stele di Rusa Erimenahi dal Keşiş Göl, էջ 231 և հաջորդիվ; **Նույնի՝** Les deux stèles de Rusa III, fils d'Ermenah, provenant du Keşiş Göl, in: **Kogan L., Koslova N., Loesov S., Tishchenko S.** (eds.), Proceedings of the 53e Rencontre Assyriologique Internationale, vol. I, part 2: Languages in the Ancient Near East, "Babel und Bibel 4", Winona Lake, Indiana, 2010, էջ 1015 և հաջորդիվ (= CTU I, A 14-2).

19 Այս հնարավորությունը ժամանակին քննարկել է նաև Կ.Ֆ. Լեման-Հաուպտը, հետազայում, սակայն, մերժելով այն: Stü **Belck W., Lehmann(-Haupt) C.F.**, Ein neuer Herrscher von Chaldia, էջ 349 և հաջորդիվ, էջ 358.

20 Stü **КВКН**, 412, лиц. стор.³, 412a_{2,3}; CTU IV, CT Tk-1 Ro₃, CB Ba-6_{2,3}.

21 Մանրամասն տես **Roaf M.**, Could Rusa Son of Erimena Have Been King of Urartu during Sargon's Eight Campaign?, in: **Kroll S., Gruber C., Hellwag U., Roaf M., Zimansky P.** (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, AI 51, Louvain, 2012, էջ 187 և հաջորդիվ:

22 Stü **Seidl U.**, Bronzekunst Urartus, Mainz am Rhein, 2004, էջ 123-124, նկ. 94; **Նույնի՝** Wer gründete Rusašinili/Toprakkale?, "Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies" 2, 2007, էջ 140-141; **Նույնի՝** Rusa son of Erimena, Rusa son of Argišti and Rusašinili/Toprakkale, in: **Kroll S., Gruber C., Hellwag U., Roaf M., Zimansky P.** (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, AI 51, Louvain, 2012, էջ 179 և հաջորդիվ: Stü նաև **Kroll S.**, Rusa Erimena in archäologischem

Ուրարտական արձանագրությունների վերջին դիվանի հրատարակիչը՝ Միրյո Սալվինին, այնուամենայնիվ, չընդունեց այդ փոփոխությունը՝ պնդելով, որ Քեշիշ-գյոլ + Գյոլվելեքի և Մավաջքի կոթողներում նկարագրված իրադարձությունները կապված են ոչ թե Ռուսախինիլիի հիմնադրման, այլ արդեն իսկ գոյություն ունեցող քաղաքը ջրով ապահովելու և Ռուսախինիլիում անավարտ մնացած ինչ-ինչ կառույցների շինարարության ավարտի հետ, ինչն էլ իրականացրել է Ռուսա Էրիմենայորդին²³: Հետևաբար, նա իշխել է Ռուսա Արգիշթորդուց հետո, սակայն շատ ավելի մոտ նրա կառավարման շրջանին, քան ընդունված էր մինչև այդ:

Խնդիրն այստեղ կապված է հիշյալ կոթողներում արձանագրված մեկ մտքի հետ: Քեշիշ-գյոլ + Գյոլվելեքի ԴԿ 41-43-րդ տողերում արձանագրված է (41) ... **ru-sa-š[(e)] (42) [(a)-li] i-ú ru-sa-ši-ni-l[(i)] (43) [(š)]i-du-ú-li i-ú i-ni šu-e ta-nu-[(bi)]** ... միտքը²⁴: Նույն միտքը կրկնվում է նաև Մավաջքի կոթողի ԴԿ 42-44-րդ տողերում²⁵: Այդ տողերի թարգմանությունը հուշում է, որ քաղաքի կառուցման ավարտը դպիրն ամեն դեպքում կապել է Ռուսա Էրիմենայորդու անվան հետ. (41) ... **Ռուսան (42) ասում է. «Երբ Ռուսախինիլին (43) կառուցեցի, երբ այս ծովը արեցի, ...»**:

Մտածել, որ Ռուսախինիլին եղել է Ռուսա Արգիշթորդու քաղաքաշինական ձեռնարկումների շարքում անավարտ մնացած ծրագիր, հազիվ թե իրատեսական կլինի: Ռուսախինիլիից հայտնաբերված ուրարտական պալատական/տաճարային համալիրի անձնակազմին վերաբերող տեքստը վկայում է, որ այն լիարժեք գործող կենտրոն էր²⁶: Այդ մասին են խոսում նաև հենց իր՝ Միրյո Սալվինիի նախկին դիտարկումները, որոնց համաձայն՝ Ռուսախինիլի Կիլբանիկային Ռուսա Արգիշթորդու հիմնադրած քաղաքների շարքում պետք է կառուցված լիներ ավելի վաղ, քան Ռուսախինիլի Էիդուրուկային²⁷: Հետևաբար, Ռուսա Էրիմենայորդու ժամանակաշրջանի վերաթվագրումը Ռուսա Արգիշթորդուց առաջ դժվար կլինի ժխտել:

Խնդիրն այստեղ այլ է՝ արդյոք Ռուսա Էրիմենայորդին նախորդել, թե՛ հաջորդել է Ռուսա Մարդուրդուն: Այս հարցը մանրամասն քննարկած մեկ այլ հետազոտող՝ Մայքլ Ռուֆը, նշում է մի քանի հնարավոր տարբե-

Kontext, in: **Kroll S., Gruber C., Hellwag U., Roaf M., Zimansky P.** (eds.), *Bainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007*, AI 51, Louvain, 2012, էջ 185; **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 197 և հաջորդիվ.

23 Տե՛ս **Salvini M.**, *Le due stele di Rusa Erimenahi dal Keşiş Göl*, էջ 210, 237 և հաջորդիվ, էջ 253; նույնի՝ *Argišti, Rusa, Erimena, Rusa und die Löwenschwänze: Eine urartäische Palastgeschichte des VII. Jh. v.Chr.*, “*Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*” 2, 2007, էջ 146 և հաջորդիվ; **նույնի՝** *Rusa I. II. III. (Ru-sa(-a)-)*, “*Reallexikon der Assyriologie und Vorderasiatischer Archäologie*” 11.5./6., 2007, էջ 465-466: Այս մասին տես նաև **Çilingiroğlu A.**, *Rusa Son of Argišti: Rusa II or Rusa III?*, “*Ancient Near Eastern Studies*” 45, 2008, էջ 27-28.

24 CTU I, A 14-1 Ro⁴¹⁻⁴³.

25 CTU I, A 14-2 Ro⁴²⁻⁴⁴.

26 Տե՛ս KYKH, 412; CTU IV, CT Tk-1.

27 Տե՛ս **Çilingiroğlu A., Salvini M.**, նշվ. աշխ., էջ 22-23: Հետագայում Միրյո Սալվինին, ելնելով ուրարտական արքաների հաջորդականության՝ իր առաջարկած սանդղակից, փոխեց այդ տեսակետը՝ գտնելով, որ Ռուսախինիլի Կիլբանիկային Ռուսա Արգիշթորդու վերջին քաղաքաշինական ծրագիրն էր կամ որ երկու քաղաքներն էլ հիմնադրվել են միաժամանակ: Տե՛ս **Salvini M.**, *Le due stele di Rusa Erimenahi dal Keşiş Göl*, էջ: 253; նույնի՝ *Die urartäische Tontafel VAT 7770 aus Toprakkale, “Altorientalische Forschungen”* 34/1, 2007, էջ 47.

րակներ՝ նախապատվությունն այնուամենայնիվ տալով Ռուսա Էրիմենա-յորդուն որպես Ռուսա I²⁸: Նրա հիմնական փաստարկները երեքն են: Այն է՝ Ռուսայի հայրը՝ Էրիմենան, գահակալ չի եղել: Համենայն դեպս, նրանից մեզ չեն հասել արքայական բնույթի արձանագրություններ: Ըստ այդմ՝ Ռուսան, Էրիմենայի որդին, գահի օրինական ժառանգորդը չէր: «Լուվրի աղյուսակ»-ի տեղեկությունը Մուծածիրում պահվող Ռուսայի արձանա-խմբի մասին, որի վրա գրված էր «**Իմ երկու ձիերով և իմ կառավարով իմ ձեռքը տիրեց Ուրարտուի արքայական իշխանությանը**» միտքը²⁹, կարող է լինել Ռուսայի կողմից գահը բռնագավթելու վկայությունը³⁰: Ռուսան ներկայացրել է Սարդուրիից՝ Իշպուինիի որդուց սերող ուրարտական արքայատան ճյուղերից մեկը՝ այսպես կոչված «Սարդուրիի ճյուղը»³¹: Նա ինքնասպան է լինում Սարգոն II-ի «8-րդ տարվա արշավանք»-ից հետո, և նրան հաջորդած Ռուսա Սարդուրորդին, ներկայացնելով արքայատան «Մենուայի ճյուղ»-ը, ըստ էության վերականգնում է նախորդ հարստության իշխանությունը³²:

Երկրորդ փաստարկն այն է, որ «Լուվրի աղյուսակ»-ը որպես Ռուսայի «հայրական տուն» նշում է Արմարիլի մարզում գտնվող Արբու քաղաքը: Մինչդեռ ակնկալվում էր, որ այդ «տուն»-ը պետք է լիներ ուրարտական արքաների նստավայրը՝ մայրաքաղաք Տուշպան³³:

Եվ երրորդ փաստարկը, ինչպես և վերը նշվեց, Ռուսա Էրիմենայորդուց մեզ հասած բրոնզե վահանների պատկերագրությունն է: Այն ներկայացնում է միջանկյալ օղակ Արգիշթի Մենուայորդուց և Սարդուրի Արգիշթորդուց մեզ հասած վահանների և Ռուսա Սարդուրորդու թողած վահանների պատկերագրության միջև: Ըստ այդմ՝ դրանք պետք է թվագրվեն ավելի վաղ, քան Ռուսա Սարդուրորդու իշխանության շրջանն էր³⁴:

Մայքլ Ռոուֆի նախընտրած տարբերակը, այնուամենայնիվ, մեզ թույլ փաստարկված է թվում: Նախ՝ նրա մոտեցումը ընդունող դեռևս Կ. Ֆ. Լեման-Հաուպտի կողմից առաջարկված տեսակետը՝ Իշպուինիի որդի Սարդուրիի հարստության գոյության մասին³⁵, որից էլ կարող էր սերել Ռուսա Էրիմենայորդին, քիչ է հավանական³⁶:

Արմարիլիում գտնվող Արբու քաղաքի բնորոշումն իբրև Ռուսայի «հայրական տուն» միանգամայն տրամաբանական է, եթե ընդունենք, որ այդտեղից է ծագել բիայնական իշխող արքայատոհմը: Տուշպան, ինչպես մենք ենք կարծում, նրանց բնօրրանը չէր³⁷:

28 Տե՛ս **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 213 և հաջորդիվ, Աղ. 14.06.

29 **Mayer W.**, Sargons Feldzug gegen Urartu-714 v.Chr.: Text und Übersetzung, "Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft" 115, 1983, էջ 108 և հաջորդիվ (տող 403-404).

30 Տե՛ս **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 198.

31 Տե՛ս **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 205-206.

32 Տե՛ս **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 213 և հաջորդիվ, Աղ. 14.06 (1A, 1A+B).

33 Տե՛ս **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 200, 205.

34 Տե՛ս **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 197-198.

35 Տե՛ս **Seidl U.**, Bronzekunst Urartus, էջ 125 և հաջորդիվ, ծխթ. 701; **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 200-201, ծխթ. 43.

36 Տե՛ս **Thureau-Dangin F.**, նշվ. աշխ., էջ xix, ծխթ. 1; **Adontz N.**, Histoire d'Arménie, Les origines, du Xe siècle au VIe (av. J. C.), Paris, 1946, էջ 192; **Арутюнян Н. В.**, Бийниили (Урарту), էջ 309, ծխթ. 558; **Salvini M.**, Geschichte und Kultur der Urartäer, էջ 97.

37 Տե՛ս **Գրեկյան Ե. Հ.**, Տուշպա քաղաքը և բիայնական (ուրարտական) պետության կազմավորման որոշ հարցեր, **Մարտիան Հ. Տ.** (խմբ.), Հայաստանի մայրաքաղաքները, Գիրք I. Վան (Վան քաղաքի

Բացի այդ՝ մեզ թույլ փաստարկված է թվում Ռուսայի և Սարգոն II-ի օրոք ասսուրա-ուրարտական հարաբերությունների համար նրա առաջարկած վերակազմությունը: Խոսքը մուծածիրյան անցքերի մասին է: Մայքլ Ռոուֆի տեսակետը՝ Ռուսա Սարդուրոդու մուծածիրյան արշավանքը, դեպի Ասորեստան Ուրգանայի փախուստի փորձը և գերեվարությունը, և ապա դրան հետևած ուրարտական արքայի մուտքը Մուծածիր Սարգոնի արշավանքից կամ Ք.ա. 714 թ-ից հետո ընկած շրջանով թվագրելը³⁸, բացարձակապես հիմնավորված չէ³⁹: Համաժամանակյա ասորեստանյան աղբյուրներից հայտնի ուրարտական արքայի գործողությունները⁴⁰ շատ ավելի բնութագրական են Ռուսա Սարդուրոդուն, քան Ռուսա Էրիմենայորդուն, առավել ևս՝ վերջինից մենք չունենք ռազմական բովանդակության որևէ արձանագրություն այն դեպքում, երբ միայն մուծածիրյան իրադարձությունները փառաբանելու համար Ռուսա Սարդուրոդին թողել է երեք երկկեզու (ասսուրերեն և ուրարտերեն լեզուներով գրված) կոթողներ:

Ինչ վերաբերում է վահանների պատկերագրությանը, ապա դա վճռորոշ փաստարկ չէ՝ Ռուսա Էրիմենայորդու գահակալության շրջանն անսպասման Ռուսա Սարդուրոդուց առաջ տանելու համար: Նախ՝ երկու արքաներն էլ մոտ են ժամանակագրորեն: Բացի այդ՝ վահանները կարող էին պատկանել հենց Ռուսա Սարդուրոդուն կամ նրա նախորդին և արդեն Ռուսա Էրիմենայորդու գահակալությամբ պայմանավորված՝ արձանագրվեին վերջինիս անունով: Նման տարբերակը չի բացառում նաև Մայքլ Ռոուֆը⁴¹:

Եվ վերջին խնդիրը վերաբերում է Սարդուրի Արգիշթորդուց հետո գահի հնարավոր բռնազավթմանը: Դա կարող էր անել ինչպես Ռուսա Էրիմենայորդին, այնպես էլ Ռուսա Սարդուրոդին: Մասնավորապես վերջինս, որն ամենայն հավանականությամբ Սարդուրի Արգիշթորդու կրտսեր (՞) որդին էր (սվազ հավանականությամբ՝ Սարդուրի Սարդուրոդու որդին և Սարդուրի Արգիշթորդու թոռը), կարող էր գահը զավթել իր եղբորից (՞) Սարդուրի Սարդուրոդուց⁴²: Բացի այդ՝ «Լուվրի աղյուսակ»-ի տեղեկությունը Ռուսայի խոսքերի՝ «երկու ձիերով և մեկ կառավարով» Ուրարտում իշխանության հասնելու մասին, նույնպես կարող է վերաբերել հենց Ռուսա Սարդուրոդուն: Բանն այն է, որ վերջինս միակն էր, որ արքայական ավանդական տիտղոսաշարի փոխարեն օգտագործում էր տիտղոսաշարի համարժեք ^mrusani ^{md}sardurihī aluše ^{KUR}biajnili nulduali և ^šusina MU^{MEŠ} ^{KUR}biajnili nulduli «Ռուսա Սարդուրոդի, ով տիրում է Վիայնելե (երկ-

առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու [7-9 հոկտեմբերի 2010թ.]), Եր., 2013, էջ 54-55:

38 Տե՛ս **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 194, 198, 207 և հաջորդիվ:

39 Տե՛ս և հմմտ. **Գրեկյան Ե. Հ.**, Դրվագներ ուրարտա-մուծածիրյան հարաբերությունների պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պրակ 24, 2005, էջ 284-288:

40 Մանրամասն տե՛ս և հմմտ. **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 202 և հաջորդիվ:

41 Տե՛ս **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 198:

42 Այստեղ նշենք, որ Սարդուրի Սարդուրոդին այսպես կոչված Սարդուրի IV-ն է, որի իշխանության շրջանը պետք է թվագրել ոչ թե Ք.ա. 7-րդ դարի վերջերով, այլ գրեթե մեկ դար ավելի վաղ՝ Ք.ա. 8-րդ դարի երկրորդ կեսով՝ Սարդուրի Արգիշթորդուց հետո: Նման պնդման համար կան բավականաչափ փաստեր, որոնք մտադիր ենք ներկայացնել մեկ այլ աշխատանքում:

րին)» և «իմ տարիների ընթացքում ես տիրում էի Վիայնելե (երկրին)» բանաձևերը⁴³, որոնք հանդիպում են նաև այս արքայի թողած աստուրաուրարտերեն երկլեզու տեքստերի աստուրերեն տարբերակում (**ina libbi MU^{MES}-ia KUR^{TILLA} irti'i/piš**)⁴⁴։

Այս արտահայտությունները, որոնք առկա են նրա թողած ռազմաքաղաքական բովանդակությամբ բոլոր արձանագրություններում, հիշեցնում են «Լուվրի աղյուսակ»-ում պահպանված Ռուսայի խոսքերը։ Բիայնիլիին իշխելու փաստի նման շեշտադրումը կարող էր պայմանավորված լինել հենց Ռուսա Սարդուրոդու և ոչ թե Ռուսա Էրիմենայորդու գահակալության հետ կապված ինչ-ինչ խնդիրներով։

Այս ամենը չի մղում մտածելու, որ ի դեմս Ուրսայի՝ Սարգոն II-ի ավստյանի, պետք է տեսնել Ռուսա Էրիմենայորդուն և որ ընդհանրապես նրա կառավարման շրջանը պետք է թվագրել Ռուսա Սարդուրոդուց անպայման առաջ։ Ըստ այդմ՝ ասորեստանյան աղբյուրներում Ք.ա. 719-ից հայտնի Ուրարտուի արքա Ուրսան/Ռուսան, որը Սարգոնի հակառակորդն էր նրա «8-րդ տարվա արշավանք»-ի ժամանակ, լինելու էր Ռուսա Սարդուրոդին։

Այստեղ հարցեր են առաջանում՝ այդ դեպքում երբ է կառավարել Ռուսա Էրիմենայորդին և ինչ հանգամանքներում է նա գահ բարձրացել։ Հարցերից առաջինի պատասխանը, կարծում ենք, տալիս են ասորեստանյան աղբյուրները։ Ինչպես հայտնի է, Ք.ա. 714-ին Սարգոնի զորքերի կողմից Մուծածիրի թալանից ու Խալդի աստծո «գերեվարություն»-ից հետո Ռուսան ինքնասպան է եղել։ Այդ մասին հայտնող «Լուվրի աղյուսակ»-ը⁴⁵ և արքայական հանդիսավոր արձանագրությունները⁴⁶ պերճախոս բառերով են ներկայացնում այդ դրվագը։ Սակայն տարօրինակ կերպով Սարգոնի տարեգրությունը Ք.ա. 713-ին դարձյալ հիշատակում է Ռուսային, ում մոտ պատվիրակություն էր ուղարկել լուվիական առաջնորդներից թաբայան Բիթ-Բուրուտաշ երկրի արքա Ամբարիսը՝ առաջարկելով ներգրավվել հակաասորեստանյան ծրագրում⁴⁷։ Այս տարօրինակ փաստին տրվել են տարբեր մեկնաբանություններ⁴⁸։ Բայց այժմ՝ Ռուսաների հաջորդականության հարցի վերաբացվելուց հետո, դրան կարող է տրվել տրամաբանական բացատրություն. Ռուսային հաջորդել է արքա,

43 КУКН, 387 урарт. текст²⁸⁻³⁰, 388⁷⁻⁸; CTU I, A 10-1⁸, A 10-3 l. d.²³⁻²⁷, A 10-4 l. d.²⁻⁵, A 10-5 Ro²⁸⁻³⁰։ Թարգմանությունը տրվում է ըստ Մարգարիտ Խաչիկյանի (**Khachikyan M.**, Notes on the Urartian Verb, "Studi Micenei ed Egeo-Anatolici" 48, 2006, էջ 147 և հաջորդիվ)։

44 КУКН, 387 ассир. текст²⁷⁻²⁸; CTU I, A 10-3 Vo⁵⁶⁻⁵⁷, A 10-5 Vo²⁶⁻²⁷։

45 Տե՛ս **Mayer W.**, նշվ. աշխ., էջ 110-111 (տող 411-413)։

46 Տե՛ս **Fuchs A.**, Die Inschriften Sargons II. aus Khorsabad. Göttingen, 1994, էջ 116-117/322 (Ann. 164-165), 36/291 (Zyl. 27), 215/347 (Prunk. 76-77); **Abraham K., Klein J.**, A New Sargon II Cylinder Fragment from an Unknown Provenance, "Zeitschrift für Assyriologie und Vorderasiatischer Archäologie" 97/2, 2007, էջ 255-256, 259-260։

47 Տե՛ս **Fuchs A.**, Die Inschriften Sargons II. aus Khorsabad, էջ 123-124/323 (Ann. 194-200), 199-200/344 (Prunk. 29-31)։

48 Տե՛ս **Adontz N.**, նշվ. աշխ., էջ 190 և հաջորդիվ; **Дьяконов И. М.**, Рец. на книгу: **Меликишвили Г.А.**, Древневосточные материалы по истории народов Закавказья. И. Наир-Урарту, Тбилиси, 1954, "Вестник древней истории" 2 (56), 1956, էջ 71, ծմբ. 2; **Арутюнян Н. В.**, Биайинли (Урарту), էջ 310; **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 206; **Fuchs A.**, Urartu in der Zeit, in: **Kroll S., Gruber C., Hellwag U., Roaf M., Zimansky P.** (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, AI 51, Louvain, 2012, էջ 136-137։

որ նույնպես կրել է Ռուսա անունը: Դա կարող էր լինել Ռուսա Էրիմենա-յորդին⁴⁹:

Մարգոն II-ի տեքստերում Ռուսա/Ուրսա անվան վերջին հիշատակու-թյունը վերաբերում է Ք.ա. 713 –ին⁵⁰: Ք.ա. 708 –ին⁵¹ ասորեստանյան ար-քան իր տարեգրության մեջ արդեն հիշատակում է Արգիշթի Ռուսայոր-դուն⁵²: Եթե ընդունենք, որ խոսքը վերաբերում է Ռուսա/Ուրսա անունով ուրարտական նոր արքային՝ Ռուսա Էրիմենայորդուն, ապա նրա կառա-վարման համար մենք ունենում ենք բավականին կարճ շրջան՝ առավելա-գույնը հինգ տարի: Ռուսայի կարճատև իշխանությունը հնարավոր է՝ բա-ցատրի այն փաստը, որ նրա կողմից ձեռնարկված արշավանքների մասին վկայություններ մեզ չեն հասել: Մյուս կողմից՝ ինչպես կարծում ենք, ռազ-մական նվաճումները Ռուսայի ծրագրերում առաջնահերթ չէին, և Ուրար-տուն այդ շրջանում բախվել էր այլ, շատ ավելի գլոբալ խնդրի՝ կլիմայա-կան փոփոխությունների առաջ բերած մարտահրավերների հետ: Պատա-հական չէ, որ Ռուսայից մեզ հասած վկայությունները վերաբերում են հիմնականում պետության ներքին/տնտեսական խնդիրների լուծմանը, այն է՝ նրա իրականացրած ամենախոշոր հիդրոշինարարական ծրագիրը՝ «Ռուսայի ծով» անունը ստացած ջրամբարի և հացահատիկի կուտակման համար նոր ամբարների կառուցումը⁵³: Վարչաքաղաքական նոր կենտրոնի՝ Ռուսախինիլի Կիլբանիկայի հիմնադրումը նույնպես կարող էր պայմա-նավորված լինել կլիմայական խնդիրներով⁵⁴: Այդ ծրագրերն իրագործելու համար չորս–հինգ տարին բավարար են թվում⁵⁵:

Ռուսա Էրիմենայորդու և նրան հաջորդած Արգիշթի Ռուսայորդու մեր-ձավորության մասին են վկայում նաև նրանց թողած արձանագրություն-ները: Ռուսայի թողած Քեշիշ-գյոլ + Գյովելեքի և Սավաջըքի կոթողներն ու Արգիշթի թողած Հադիի և Չելեքի–բադրի արձանագրություններն ունեն ոճական ընդհանրություններ, որոնք հանդիպում են միայն այդ տեքստե-րում, ասես դրանք հեղինակել է նույն դպիրը⁵⁶: Մասնավորապես, միայն այս արքաների արձանագրություններում են հանդիպում Խալդիի կողմից թագ, գահ, արքայական գայիսոն և «ձշմարիտ իշխանություն» ստանալու

49 Տե՛ս նաև **Seidl U.**, Rusa son of Erimena, Rusa son of Argišti and Rusaḫinili/Toprakkale, էջ 181: Հմն. **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 205–206.

50 Տե՛ս **Fuchs A.**, Die Inschriften Sargons II. aus Khorsabad, էջ 124/323 (Ann. 199), 200/344 (Prunk. 31).

51 Հմն. **Fuchs A.**, Die Annalen des Jahres 711 v. Chr., “State Archives of Assyria Studies” 8. Helsinki, 1998, էջ 83; նույնի՝ Urartu in der Zeit, էջ 137, 141, 156, Աղ. 09.05.

52 Տե՛ս **Fuchs A.**, Die Inschriften Sargons II. aus Khorsabad, էջ 222/349 (Prunk. 113).

53 Տե՛ս KYKH, 443–444; CTU I, A 14–5 – 14–6.

54 Տե՛ս **Grekyan Y. H.**, When the Gods Leave People (The Climatological Hypothesis of the Collapse of the Urartian State), in: **Kosyan A., Grekyan Y., Bobokhyan A.** (eds.), The Black & The White: Studies on History, Archaeology, Mythology and Philology in Honor of Armen Petrosyan in Occasion of His 65th Birthday, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” VIII/1–2, Yerevan, 2014, էջ 65 և հաջորդիվ:

55 Քննարկումների համար տե՛ս նաև **Salvini M.**, Le due stele di Rusa Erimenahi dal Keşiş Göl, էջ 248 և հա-ջորդիվ: Այստեղ նշենք նաև այն փաստը, որ Ռուսա Էրիմենայորդու թողած զույգ կոթողներից մեկի՝ Քեշիշ-գյոլ + Գյովելեքի տեքստի արձանագրումը մնացել է անավարտ (**Գրեկյան Ե. Հ.**, Գյովելեքի ուրարտական արձանագրությունը, էջ 226, 246–247): Դա կարող էր կապված լինել արքայի կարճատև կտրավարման և նրա վախճանի հետ: Հմն. **Salvini M.**, Le due stele di Rusa Erimenahi dal Keşiş Göl, էջ 256.

56 Տե՛ս **Salvini M.**, Una stele di Rusa III Erimenahi dalla zona di Van Salvini, էջ 141–142, Appendice; **Գրեկյան Ե. Հ.**, Գյովելեքի ուրարտական արձանագրությունը, էջ 228–229 և ծնթ. 9. Քննարկման համար տե՛ս և հմն. **Salvini M.**, Le due stele di Rusa Erimenahi dal Keşiş Göl, էջ 254: Թարգմանության համար տե՛ս նաև **Khachikyan M.**, նշվ. աշխ., էջ 143 և հաջորդիվ:

բանաձևերի շարքը, և ընդգծվում էր գահին գերագույն աստծո կամքով բազմելու փաստը:

Ժամանակին մենք ենթադրել ենք, որ նման բանաձևերի կիրառումը Ռուսա Էրիմենայորդու և Արգիշթի Ռուսայորդու արձանագրություններում կարող են պայմանավորված լինել հենց այն փաստով, որ նրանք չեն եղել գահաժառանգներ կամ նրանց գահակալությունն ուղեկցվել է ինչ-ինչ խնդիրներով: Դա կարող է նաև վկայել, որ Արգիշթին Ռուսա Էրիմենայորդու ժառանգն էր և նոր արքայատան (°) / իշխող արքայատան կրտսեր ձյուդի (°) ներկայացուցիչը:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցին՝ Էրիմենայի գահակալության հանգամանքներին և նրա ծագմանն ընդհանրապես, ապա այստեղ առաջիմ մեծ է անորոշությունը⁵⁷: Նորասորեստանյան աղբյուրներում նրա անունը չի հանդիպում, իսկ Էրիմենային հիշատակող բոլոր արձանագրությունները գրվել են նրա որդու՝ Ռուսայի կողմից⁵⁸: Միանգամայն իրատեսական է այն կարծիքը, որ Էրիմենան երբևէ գահին չի եղել⁵⁹: Ինչպես նկատել է Միրյո Սավվինին, Ռուսա Էրիմենայորդին իր արձանագրություններում չի նշում «հայրական տեղ»-ը բազմելու մասին, ինչպես նախորդ արքայերը (^{LU}ateini esi nahabe / nahabi ^{LU}AD-ni esi)⁶⁰, այլ հայտնում է միայն արքայական գահին բարձրանալու մասին (**nahadi LUGÁL-tuhinina** ^{GIS}GU.ZA)⁶¹:

Սակայն արդյո՞ք դա բավարար է Ռուսային արժանացնելու ուզուրպա-

57 Էրիմենայի գահակալության հարցը քննարկվել է վաղուց: Տես դեռևս **Belck W., Lehmann (-Haupt) C. F.**, Ein neuer Herrscher von Chaldia, էջ 340 և հաջորդիվ: Նիկողայոս Ադոնցը Էրիմենային նույնացնում էր Սարգուրի III-ի հետ (**Adontz N.**, նշվ. աշխ., էջ 193). Սյուս հետազոտողները Էրիմենայի անունը ներառում են ուրարտական արքայացանկում՝ նրա համար ենթադրելով կառավարման ինչ-որ շրջան՝ Ք.ա. մոտ 635/25-620/10-ական թթ-ի սահմաններում: Տես **Lehmann-Haupt C. F.**, Corpus Inscriptionum Chaldicarum, I. Lieferung. Berlin – Leipzig, 1928 (Աղ. „Das urartäisch-chaldische Herrscherhaus“); տույսի՝ Armenien einst und jetzt II/2: Kultur, Herkunft und Verbleib der Chalder – Der Rückzug der zehntausend Griechen von der Ebene Alaschgert zum Schwarzen Meer, էջ 685 (Ք.ա. 625-603 թթ.); **Плютовский Б. Б.**, Ванское царство (Урарту), էջ 42 (Ք.ա. 625-620 թթ.); **Меликишвили Г.А.**, նշվ. աշխ., էջ 320 և հաջորդիվ (Ք.ա. մոտ 635-625 թթ.); **Կարագյոզյան Հ. Հ. (Կարագեղեան Յ.)**, Հայկական լեռնաշխարհի սեպագիր աղբյուրներում, Հատոր I, Գիրք 1. Սեպագիր տեղանուններ, Եր., 1998, էջ 68 (Ք.ա. 620-610 թթ.); **Հարությունյան Բ. Հ.**, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ /մ.թ.ա. VII-VI դդ./, Եր., 1998, էջ 84-85 (Ք.ա. 631-608 թթ.): Հմմտ. նաև **Հմայակյան Ս. Գ.**, Թեյշեբաինի արշավող բանակի երթուղին / 0 маршруте армии, разрушавшей город Тейшебаини, **Քալանթարյան Ա. Ա., Հմայակյան Ս. Գ.** (խմբ.), Էրեբունի – Երևան. Հանրապետական գիտական նստաշրջանի հիմնադրույթներ նվիրված Բ.Բ. Պիոտրովսկու հիշատակին, Եր., 1998, էջ 11-12 (Ք.ա. 585-555 թթ.): Որոշ հետազոտողներ նրա կառավարման շրջանը տանում էին ավելի վաղ՝ Ք.ա. մոտ 670-660-ական թթ-ներ: Տես և հմմտ. **Sandalgian J.**, Les inscriptions cunéiformes urartiques. Venise, 1900, էջ XXXVII; **van Loon M.N.**, Review article of W. Kleiss (Hrsg.), Bastam I: Ausgrabungen in den urartäischen Anlagen 1972-1975, Berlin, 1979, «Bibliotheca Orientalis» 42.1/2, January-Maart, 1985, էջ 193.

58 Էրիմենայի իշխանության միակ վկայությունը համարվող կարմիրբլուրյան սեպագիր արձանագրության կնքադրոշմում ^{me}-[r]i-me-na-ni/né ^{ma}[r(?)]/^{mr}[u(?)]] ընթերցումը վիճահարույց է: Տես **Մովսիսյան Ա. Ե.**, Կարևոր մի ուղղում (Կարմիր բլուրի սեպագիր սալիկներից մեկի առնչությամբ), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պրակ 19, էջ 133-134; **Movsisyan A. E.**, Die sogenannte ‚Erimenta Tafel‘, „Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies“ 1, 2006, 203-204. Հմմտ. **Дьяконов И. М.**, Урартские письма и документы, Москва-Ленинград, 1963, էջ 33 և հաջորդիվ (№ 3, печать), էջ 57; КУКН, 433, печать.

59 Տես, դեռևս, **Thureau-Dangin F.**, նշվ. աշխ., էջ xix: Քննարկումների համար տես նաև **Մովսիսյան Ա. Ե.**, Կարևոր մի ուղղում (Կարմիր բլուրի սեպագիր սալիկներից մեկի առնչությամբ), էջ 133-139; **Movsisyan A. E.**, Die sogenannte ‚Erimenta Tafel‘, էջ 202 և հաջորդիվ; **Çilingiroğlu A.**, Rusa Son of Ar-gishtu: Rusa II or Rusa III?, էջ 27; **Roaf M.**, նշվ. աշխ., էջ 191.

60 Տես, օրինակ, КУКН, 247²; CTU I, A 9-17².

61 CTU I, A 14-1 Ro₉₋₁₀, A 14-2 Ro₈₋₉.

նելու Ռուսա Սարդուրդուց հետո և մինչև Ռուսա Արգիշթուրդի ընկած ժամանակահատվածում: Ըստ այդմ փոխվում է նրանց հաջորդականությունը որպես Ռուսա II (Ռուսա Էրիմենայորդի) և Ռուսա III (Ռուսա Արգիշթուրդի): Ռուսա Էրիմենայորդու իշխանության շրջանը մենք թվագրում ենք Ք.ա. 713 – 708 թվականներով:

Երվանդ Հ. Գրեկյան – գիտական հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է Բիայնիլի-Ուրարտուի, Հայկական լեռնաշխարհի այլ վաղպետական կազմավորումների, ինչպես նաև հին Առաջավոր Ասիայի տարբեր երկրների պատմությանն և պատմական աշխարհագրությանը, տնտեսությանը, հոգևոր և նյութական մշակույթին, հնամիջավայրին վերաբերող հարցեր: Այդ հիմնահարցերի վերաբերյալ հրատարակել է շուրջ վեց տասնյակ գիտական հոդվածներ:

Summary

CARL FRIEDRICH LEHMANN-HAUPT AND THE URARTIAN KING LIST

On the Problem of “Three Rusas”

Yervand H. Grekyan

Key words – C.F. Lehmann-Haupt, Biainili-Urartu, chronology, king list, Rusa Sardurihi, Rusa Erimenahi, Rusa Argistihi, To-prakkale, Keşiş-Göl, Gövelek (Ermanc’).

Among the pioneers of Urartian studies C.F. Lehmann-Haupt was the first scholar who compiled and presented the chronology of the Urartian kings on a scientific basis. In his study published in 1894 he considered Rusa, the son of Erimena as the first king who bore that name.

Like C.F. Lehmann-Haupt, another prominent Assyriologist of that period – François Thureau-Dangin, presumed that Ursa of Urartu, the adversary of Sargon II of Assyria in 714 B.C., was Rusa, the son of Ermiena, whom he considered to be the founder of a new dynasty.

Later on, C.F. Lehmann-Haupt, whom already became known the existence of another king named Rusa, the son of Sarduri, considered him to be the king of Urartu during the Sargon II’s campaign to Urartu in 714 B.C. In contrast to his previous opinion, he positioned Rusa, the son of Erimena at the end of the Urartian king list, after Rusa, the son of Sarduri, and Rusa, the son of Argišti, naming him “Rusa III”.

Apart from the succession of the Urartian kings, many other ideas of Lehmann-Haupt were refused by almost all following researchers. On the other hand, the Keşiş-Göl inscription ascribed by Lehmann-Haupt to Rusa, the son of Sarduri, was connected with the foundation of the new city Rusajinili named after the Urartian king. It was considered as a new political center of the Urartian kingdom after the devastation of the old capital city

Ṭuṣpa by Tiglath-Pileser III of Assyria during his campaign to Urartu in 735 B.C. Thus, Rusa, the son of Sarduri became Rusa I, the son of Sarduri II.

Publication of the inscription on a preserved upper part of a stele discovered not far from the modern city Van in 2002, near the ancient Armenian village Ermanc' (Ermanis, nowadays, Gövelek), opened a new page in these discussions, as soon as it became clear that it was the missing upper part of the well-known Keşiş-Göl inscription. In 2006 another inscribed stele, the duplicate of that inscription was also discovered at Hefşesorik (nowadays, Savacık). Thus, there was no doubt that both stelae were left by Rusa, the son of Erimena. This discovery made to review the chronology of the Urartian kings in the 8th-7th centuries B.C.

The article discuss the arguments, which allow to consider Rusa, the son of Erimena as "Rusa I" (variant A), "Rusa II" (variant B) and "Rusa III" (variant C) and offers succession of the Urartian kings of the 8th-7th centuries B.C. with different variations. The "variant B" seems more convincing. Moreover, it seems possible to date the period of his reign between 713- 708 B.C. The possible short-term reign of Rusa, the son of Erimena, could explain the small number of monumental stone inscriptions left by him, informing us only about the king's building activity, and the fact, that one of these inscriptions remained unfinished.

Резюме

КАРЛ ФРИДРИХ ЛЕМАН-ХАУПТ И СПИСОК УРАРТСКИХ ЦАРЕЙ

О проблеме «Трех Руса»

Ерванд А. Грекян

Ключевые слова – К.Ф. Леман-Хаупт, Биайнили-Урарту, хронология, царский список, Руса, сын Сардури, Руса, сын Эримены, Руса, сын Аргишти, Топрах-кале, Кешиш-Гёл, Гёвелек (Эрманц).

К.Ф. Леман-Хаупт – один из пионеров урартологии – был первым, кто попытался составить на научной основе хронологию урартских царей. В своей работе, опубликованной еще в 1894 г., он рассматривает Русу, сына Эримены (имя которого на тот момент было известно только по надписям на бронзовых щитах, обнаруженных в Топрах-кале), как первого царя, носящего имя «Руса». Как К.Ф. Леман-Хаупт, так и другой крупный ассириолог этого периода Франсуа Тюрю-Данжен также считал, что Руса или Урса – противник Саргона II во время похода 714 г. до р.Х. – это Руса, сын Эримены, который, по его мнению, являлся основателем новой династии.

Впоследствии К.Ф. Леман-Хаупт, которому уже было известно о существовании Русы, сына Сардури, выразил мнение, что именно этот Руса был царем Урарту во время похода Саргона II. В отличие от своей прежней точ-

ки зрения, он предположил, что Руса, сын Эримены, правил после правления Русы, сына Аргишти, поместив его имя в конец списка урартских царей и назвал его «Русой III».

Кроме очередности царей, многие другие предположения Леман-Хаупта были отклонены почти всеми исследователями. С другой стороны, клинописная надпись Кешиш-гёла, где упоминается имя Русы без отчества, и которую К.Ф. Леман-Хаупт приписывал Русе, сыну Сардури, стали связывать с основанием города Русахинили Килбаникаи (Топрах-кале), обуславливая это обстоятельство разрушением Тушпы Тиглатпаласаром III. Тем самым Руса, сын Сардури, становился первым царем, который носил имя «Руса».

Публикация клинописных надписей с неполной стелы, обнаруженной в 2002 г. недалеко от Вана, около бывшего армянского села Эрманц (Эрманис, в настоящее время – Гёвелек), открыла новую страницу в этих прениях, когда вскоре стало ясно, что эта стела является верхней утерянной частью давно известной стелы Кешиш-гёла. В 2006 г. также была обнаружена копия этой надписи – целая стела Хефшесорика (в настоящее время Саваджык), которая окончательно разведала сомнения о том, что эти обе стелы были созданы Русой, сыном Эримены.

Данное открытие вынуждает пересмотреть хронологию урартских царей 8–7 вв. до р.Х.

В статье рассматриваются те доводы, которые позволяют рассматривать Русу, сына Эримены и как «Русу I» (вариант А), и как «Русу II» (вариант В) и как «Русу III» (вариант С) с разными вариациями этих вариантов. Более обоснованным является вариант признания Русы, сына Эримены, «Русой II». Более того, кажется возможным датировать его правление конкретным периодом между 713 и 708 гг. до р.Х. Вероятностью кратковременного правления Русы, сына Эримены, можно объяснить как малочисленность дошедших до нас его клинописных надписей, так и то обстоятельство, что одна из этих надписей не была завершена.